



Ջուլիետա Պարզևի Ասատրյանը՝ Բյուրեղավանի հիմնական դպրոցի տնօրենը, այցեքարտն է բյուրեղավանցու, նրա վիշտն ու ուրախությունը կիսողը, խորհրդատուն ու ընկերը՝ հորդաբուխ մի էություն, ում խոսքն ու գործը մեկտեղվում են նոր օրվա ակնկալիքով, մտքի թռիչքն ու հայրենիքը ծուլվում ու վարդաններ կերտում, մանկանց հետ շուրջպարվում Արագածի սեզ լանջերին՝ դառնալով մարդեղություն, խորհրդանշելով հայի ոգեղեն ուժն ու անպարտելիությունը: Ջուլիետա Ասատրյանը ծնվել է Թիֆլիսում՝ ծառայողի ընտանիքում: Դեռ փոքրուց հետաքրքրություն է ունեցել գեղարվեստական խոսքի նկատմամբ: Բոլորը կարծում էին, որ նա կդառնա խոսքի վարպետ: 1964 թ-ին ավարտել է Թիֆլիսի N93 հայկական միջնակարգ դպրոցը: Ավարտելով դպրոցը, ընդունվում է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտ: Մեկ տարի անց թողնում է ինստիտուտը՝ ելնելով ընտանեկան պայմաններից: 1968 թ-ին ընդունվում է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, որտեղ աչքի է ընկնում իր ընդունակություններով: 1972թ-ին ավարտելով ինստիտուտը, նշանակվել է Աբովյանի շրջանի Արզնի բանավանի հայկական միջնակարգ դպրոցում, որպես ուսուցչուհի, ուր և աշխատում է մինչև օրս՝ շարքային ուսուցչից մինչև տնօրեն: Ջուլիետա Ասատրյանը բազմաթիվ հողվածների, սցենարների, ռադիոհեռուստա հաղորդումների, կոմպոզիցիաների հեղինակ է: Ստեղծագործում է, նրա ստեղծագործությունները տպագրվել են հանրապետական, շրջանային թերթերում և ամսագրերում: Երկու գրքույկների հեղինակ է՝ «Կարոտի նովելներ» և «Մի կում լուսին»: Մանկավարժական մոտ կեսդարյա կենսագրության ընթացքում արժանացել է բազմաթիվ կոչումների, շնորհների ու պարգևների: Դրանցից են՝ «Ավագ ուսուցիչ», «Մովսես Խորենացի» մեդալ, Նավասարդ ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, Օրբելու անվան համալսարանի բանասիրական ֆակուլտետի խորհրդատու, ՀՍՍՀ ուսուցիչների 4-րդ համագումարի պատգամավոր, 9-րդ հնգամյակի և ստեղծագործողի կրծքանշանի ասպետ, ՌԲԱ հայկական մասնաճյուղի պատվավոր դոկտոր, ՀԼԿԵՄ Աբովյանի շրջկոմի, ՀԱՄԿԽ-ի Կոտայքի մարզի, Բյուրեղավանի քաղաքապետարանի շնորհակալագրեր, պատվոգրեր, ԼՂՀ «Մայրություն» ՀԿ-ի կողմից «Մայրական երախտագիտություն» մեդալ՝ Արցախի ազատագրման համար կատարած հատուկ ծառայությունների համար և այլն: Այսօր էլ, մեր սիրելի ընկեր Ասատրյանը շարունակում է աշխատել նույն եռանդով ու ավյունով, ինչպես տարիներ շարունակ: Հիմա, երբ երեք դուստրերից յուրաքանչյուրն արդեն երկու երեխայի մայր է, տիկին Ջուլիետան զարմանում է, թե ինչպես է իրեն հաջողվել ժամանակին հաջողությամբ հաղթահարել բազմազբաղությունը, միաժամանակ պահպանելով ընտանեկան ներդաշնակությունն ու ջերմությունը: Մաղթենք նրան, որ դեռ երկար փայլի նրա լույսը

մատաղ սերնդի ապագա տանող ճանապարհին, թող նրա բոլոր սաները հասնեն իրենց նպատակներին և փառք տան ու բարի հիշեն սիրելի Ուսուցչուհուն...